ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 15.01.2014Թ. ԹԻՎ 01/7-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ» ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի և Կարեն Սարդարյանի,

քննության առնելով Պալատի 15.01.2014թ. թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման» կարգում փոփոխություններ կատարելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ՝

Պալատի խորհրդի 15.01.2014թ. թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատվել է «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման» **(այսուհետ նաև՝ Կարգ)**, որով սահմանվում է հանրային պաշտպանի թեկնածուների համար մրցույթի կազմակերպման և անցկացման, հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու, ինչպես նաև հանրային պաշտպանին պաշտոնի նշանակելու ընթացակարգերը:

Պալատի խորհրդի քննարկմանն է ներկայացվել Կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծ, որով առաջարկվող փոփոխություններն ուղղված են Կարգում առկա կարգավորումներն առավել հստակեցնելուն, միևնույն հարաբերությունը կարգավորող կանոնները համակարգելուն և Կարգի մեկ կետով սահմանելուն, ինչպես նաև Կարգում առկա տեխնիկական բնույթի թերություններն ու անճշտություններն ուղղելուն:

Հատկանշական է, որ Կարգի փոփոխությունների առաջարկվող նախագծով հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու մրցույթի կազմակերպման և անցկացման, ինչպես նաև հանրային պաշտպանի նշանակման վերաբերյալ սահմանված ընթացակարգերն, ըստ էության չեն փոփոխվում: Դրանցում կատարվում են զուտ խմբագրական բնույթի փոփոխություններ և հստակեցումներ:

12 նոյեմբերի 2018թ.
թիվ 20/13-Լ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 15-րդ կետի, 44-րդ հոդվածի 2-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 5-րդ և 6-րդ մասերի, 37-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև Պալատի կանոնադրության 16.5 կետի 31-րդ ենթակետի պահանջներով՝ Պալատի խորհուրդը միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1) *Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 15.01.2014թ. թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման» կարգը լրացնել նոր՝ 1.8. կետով՝ հետևյալ բովանդակությամբ.* ***«1.8. Հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում ընդգրկված թեկնածուն հանվում է ցուցակից՝***

ա. հանրային պաշտպան նշանակվելու դեպքում՝ նշանակվելու պահից,

բ. հանրային պաշտպանի առկա թափուր հաստիքը համալրելու առաջարկը թեկնածուի կողմից մեկ տարվա ընթացքում երկրորդ անգամ մերժելու դեպքում՝ առաջարկը մերժելու (առաջարկին չպատասխանելու) պահից,

գ. Մրցույթին մասնակցելու դեպքում՝ Մրցույթին մասնակցելու դիմում ներկայացնելու պահից,

դ. սույն կարգի 1.7. կետում նշված ժամկետը լրանալու պահից:»

2) Կարգի 2.1. կետում *«(այսուհետ՝ մրցույթ)»* բառերը հանել:

3) Կարգի 2.2. կետի առաջին նախադասությունում *«(այսուհետ՝ հայտեր)»* բառերը հանել:

4) Կարգի 2.4. կետում *«Դիմումին կցվում է դիմողի մեկ գունավոր լուսանկար 3x4 չափսի:»* նախադասությունը հանել:

5) Կարգի 2.5. կետում *«Հավակնորդներին դիմումն ընդունվելու պահին տրամադրվում է քննական թերթիկ, որում փակցվում է հավակնորդի լուսանկարը, նշվում է անուն ազգանունը, մրցույթի գրավոր փուլի օրը, մրցույթի գրավոր փուլի սկսվելու և ավարտվելու ժամերը: Քննական թերթիկի ձևը հաստատում է Պալատի նախագահը:»* նախադասությունները հանել:

6) Կարգի 2.7 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ***«2.7. Մրցույթին թույլատրվում է մասնակցել անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանական գործունեության վկայականով ներկայանալու դեպքում:»:***

7) Կարգի 3.4. կետում *«առնվազն մեկ տարի ժամկետով»* բառերը փոխարինել ***«որոշակի ժամկետով»*** բառերով:

8) Կարգի 3.10. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ***«3.10. Հանձնաժողովի որոշումը ստորագրում է Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:»:***

9) Կարգի 3.11. կետի 1-ին ենթակետում *«անձնական գործերը»* բառերը փոխարինել *«**կողմից ներկայացված փաստաթղթերը**»* բառերով:

10) Կարգի 4.14. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ***«4.14. Հարցազրույցի ավարտից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովը հարցազրույցի փուլին մասնակցած յուրաքանչյուր հավակնորդի համար սույն կարգի 3.9-րդ կետով նախատեսված կարգով կայացնում է պատճառաբանված որոշում՝ մրցույթին հաղթող ճանաչելու և հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում ընդգրկելու կամ մրցույթում հաղթող չճանաչելու մասին:»:***

11) Կարգը 5.3. կետն ուժը կորցրած ճանաչել:

12) Կարգի 5.4. կետի երկրորդ նախադասությունը *«յուրաքանչյուր տարի հանրային պաշտպանների»* բառերից հետո լրացնել *«**ընդհանուր թվի**»* բառերով:

13) Կարգի 5.7. կետում *«, սակայն բոլոր դեպքերում, ոչ ավել, քան տվյալ տարվա դեկտեմբերի վերջին աշխատանքային օրը»* բառերը հանել:

14) *Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի նոյեմբերի 13-ից:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

12 նոյեմբերի 2018թ.
թիվ 20/13-Լ
ք. Երևան